ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N3
ԷԱՃԱՊՁԲ-ԱԻՆ-18/13 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՅՏԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆԻՍՏԻ

ք. Երևան **13 դեկտեմբերի 2018թ.**
Ժամը 12:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝

Արեն Մեսրոպյան՝ ԱԻՆ շենքերի, շինությունների պահպանման և տնտեսական վարչության գնումների կազմակերպման պատասխանատու.

Անդամներ՝

Գարիկ Բոյաջյան՝ փրկարար ծառայության թիկունքի և նյութատեխնիկական ապահովման վարչության պլանավորման, հաշվառման և վերլուծության բաժնի պետ.

Հայկ Ծատուրյան՝ ԱԻՆ իրավական ապահովման և միջազգային պայմանագրերի վարչության օրենսդրության կատարելագործման բաժնի առաջատար մասնագետ.

Հանձնաժողովի քարտուղար՝

Արմինե Գալուստյան՝ ԱԻՆ աշխատակազմի շենքերի, շինությունների պահպանման և տնտեսական վարչության գնումների կազմակերպման բաժնի գլխավոր մասնագետ.

1. Ընդունել ի գիտություն.

1.1 ՀՀ կառավարության 18.05.2017թ. թիվ 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի /Կարգ/ 19-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե /Կոմիտե/ հարցում է ուղարկվել ԷԱՃԱՊՁԲ-ԱԻՆ-18/13 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների՝ «ԴԵՐՁԱԿ», «ԱԲԻ», «ԷԼԱԱՄՈԴԱ» ՍՊ ընկերությունների հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ:

1.2 Ղեկավարվելով Կարգի 19-րդ կետի 4-րդ ենթակետով՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցներին www.eauction.armeps.am համակարգով (Համակարգ) ծանուցվել է՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել Կարգի 11-րդ կետի 3-րդ ենթակետի «ա» պարբերությամբ սահմանված՝ առաջարկվող ապրանքների անվանումները և տեխնիկական բնութագրերը /ամբողջական նկարագրեր/:

2. Հանձնաժողովն արձանագրեց.

2.1 Կարգով սահմանված ժամկետում՝ Կոմիտեից Կոմիտեից ստացվել է դրականի եզրակացություն /կցվում է/:

2.3 Սույն արձանագրության 1.2 կետով պահանջվող փաստաթղթերը սահմանված ժամկետում՝ մասնակցի կողմից համակարգով ներկայացվել են և համապատասխանում են հրավերի պահանջներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0

3. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ **<u>հանձնաժողովը որոշեց.</u>**

3.1 Ընտրված մասնակիցներ ճանաչել.

ա) «ԴԵՐՁԱԿ» ՍՊ ընկերությունը 1,3,4,6,7 չափաբաժիններով,

բ) «ԱԲԻ» ՍՊ ընկերությունը 2-րդ չափաբաժնով,

գ) «ԷԼԱԱՄՈԴԱ» ՍՊ ընկերությունը 5-րդ չափաբաժնով:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0

3.2 Հաստատել ԷԱՃԱՊՁԲ-ԱԻՆ-18/13 ծածկագրով ընթացակարգի պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0

4. Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները և ազգանունները

Հանձնաժողովի

նախագահ՝ _____ Ա. Մեսրոպյան

անդամներ՝ _____ Գ. Բոյաջյան

_____ Հ. Ծատուրյան

քարտուղար՝ _____ Ա. Գալուստյան